



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



№ 3 ԱՐԵՆԱՅՈՒԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՎԵՐԵՐԻ ՀՊ № 3

## ՀՐԱՅԱՆԳՆԵՐ

### ՍՊԱԾՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ

Թարգմ. ռուսեակից  
Տիկին Մ. Տեր Յանիքսան

—♦—♦—♦—♦—♦—♦—♦—♦—

Ա. Էջմիածնի  
Եղբայրություն Տաղավար Ալոնոյ  
1919



472-1497

## ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԲԱԿ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ

### 1. ԷՆԴՀԱՆՈՒԻՐ ՄԱՍ

Վարչութեան պարտականութիւնները

1. Վարչութիւնը վարում է ընկերութեան գործերն ու դրամագլուխները՝ բացի դրանից, վարչութեան պարտականութիւնների մէջ մտնում հն.

ա. Հրաւիրել և արձակել ընկերութեան ծառայողներին.

բ. Խանմանել նրանց սոճիկն ու ծառայութեան պայմանները.

գ. Կնքել պայմաններ ծառայողների հետ.

դ. Հոգալ աղատ կանխիկ գումարների մասին՝ աշխատել տեղաւորել այդ գումարները գլխաւորապէս կօօպերատիւ հիմնարկութիւնների մէջ:

ե. Ընդունել նոր անդամնոր ընկերութեան մէջ՝ հոգալով անդամների թւի աւելացման և կօօպերատիւ պրօպագանդայի մասին.

զ. Հոգալ վարկի խնդրի կանոնաւորութեան մասին, եթէ խնդրը դրական կերպով է լուծւած ընկերութեան մէջ:

Ծանօթութիւն. Վարչութիւնը իր անդամներից մէկի վրա պարտականութիւն է դնում հսկելու, որ վարկը չլինի աւելի, քան հարկաւոր է, և երկրորդ՝ որ ժամանակամիջոցները ի չարք գործ չըբւն:

է. Հոգալ ձեռք բերելու անհրաժեշտ իրաւունքներ ու արտօնագրեր։

ը. Հոգալ, որ կանոնաւոր պահեն կշեռքներն ու չափերը.

թ. Հոգալ գնելիք ապրանքների ընտրութիւնն ու նրանց ձեռք բերելու միջոցները (կանխիկ դրամով, թէ ավասիկ)։

ժ. Կաղմակերպել ձեռնարկներ ընկերութեան համար և նրանց կառավարելը.

Ժա. Բնկերութեան անունից կնքել պայմաններ առլրանք մատակարարելու վերաբերմամբ.

Ժբ. Վարձել ընկերութեան համար պահեստներ, բնակարաններ և այլ անհրաժեշտ շինութիւններ.

Ժգ. Ընկերութեան գոյրերի տպահովագրութիւններ.

Ժդ. Կատարել անշարժ կայքեր ձեռք բերելու և վաճառելու համար հարկաւոր բոլոր օրինական գործողութիւնները.

Ժե. Տալ հաւատարմագրեր ընկերութեան այս կամ այն գործը վարելու համար.

Ժզ. Վարչութեան անդամներին ընկերութեան գործերով այս կամ այնտեղ ուղարկելը և նրանցից հաշիւ պահանջելը.

Ժէ. Հաշւարանութեան համար ձեր սահմանելը և նրանց կանոնաւորութեան հետեւելը.

Ժը. Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար կազմել անցած տարւայ հաշիւն ու գործունէութեան գեկուցումը, ինչու պէս և առաջիկայ տարւայ նախահաշիւն ու գործունէութեան ծրագիրը.

Մանօքը անդամների ծանօթութեան համար պատրաստ պէտք է լինի ընդհանուր ժողովից առնազը մի շարաթ տառջ:

Ժթ. Ընկերութեան անդամներին ընդհանուր ժողովին հրաւիրելը:

2. Վարչութեան առանձին անդամները վարում են այս կամ այն ընթացիկ գործերը—համաձայն վարչութեան սրոշման նրանց վրա դրամականութիւններին:

Մանօքը անդամների վարչութիւնը կարող է տմեն ժամանակ փոխել իր անդամների պարտականութիւնները:

3. Վարչութեան առանձին անդամներն իրաւունք ունեն կարգադրելու և ցուցմունքները տալու միայն այն ծառայողներին, որոնք գտնուում են իրենց տեսչութեան տակ.

4. Ընկերութեան անունից բանակցութիւնները և գործերը, իրենց տեսչութեան չենթարկուող բաժինների վերաբերմամբ, վարչութեան առանձին անդամները կարող են վարել միայն դէպքում, երբ նրանք ունեն զրա համար վարչութեան յատուկ լիազօրութիւն:

5. Վարչութեան բոլոր անդամները, իրենց պարտականութիւնները կատարելու ժամանակը, պարտաւոր են զեկավարել ներկայ համանգով:

Վարչութեան առաջին կազմակերպչական ժողովը.

6. Ընտրութիւնից ոչ աւելի, քան 3 օր յետոյ, վարչութիւնը գումարում է իր կազմակերպչական նիստը:

Նոր բացւող ընկերութիւնների մէջ այդ ժողովը հրաւի-  
քում են իրենք հիմնադիրները, իսկ հին ընկերութիւնների մէջ—  
հին վարչութիւնը:

Ծանօթութիւն. Եթէ վարչութիւն կազմակերպչական ժողովը  
չհրաւիրւի մինչև Շօրւայ ընթացքում, այդ գէպքում  
ժողովը հրաւիրում է վարչութիւն նորընտիր ան-  
դամներից մէկը:

7. Վարչութիւնը իր առաջին կազմակերպչական նիստում  
ա. Ընտրում է իր միջից, մտքերի փոխանակութիւնից  
յետոյ, գաղտնի քւէարկութիւնով նախագահը:

բ. Փոխ-նախագահը.

գ. Փոխագարձ համաձայնութեամբ բաշխում է անդամ-  
ների մէջ քարտուղարի, գանձապահի, խանութի կառավարչի և  
միւս պաշտօնները: Եթէ համաձայնութիւն չի կայանում, այն  
ժամանակ պաշտօնների բաշխումը կատարում է ձայների  
մեծամասնութեամբ: Այս գէպքում, երբ վարչութիւն ունի անդամը  
չի համաձայնում վերցնել իր վրա դրած պարտականութիւնը,  
նա հեռանում է վարչութիւնից և նրան փոխարինում է անձնա-  
փոխանորդը:

Ծանօթութիւն. Նախագահը և խանութի կառավարիչ վար-  
չութիւն անդամը, չեն կարող կատարել գանձապահի  
պաշտօնը:

դ. Որոշում է շաբաթւայ մէջ մի օր հերթական նիստերի  
համար.

ե. Նշանակում է նիստերի տեղը.

Ծանօթութիւն. Վաչութիւն հերթական նիստերի սահման-  
ւած օրւայ մասին յայտարարութիւն պիտի փակցւի  
խանութում և զրասենեակում ի գիտութիւն անդամ-  
ների:

Վարչութեան կազմը եւ նրա փոփոխութիւնները,

8. Վարչութիւնը կազմւում է 3—4 անդամից և ընտրում  
է 3 տարով:\*)

9. Անձնափոխանորդները ընտրուում են վարչութիւն ան-  
դամների թւին համապատասխան.

10. Վարչութիւն անդամի հիւանդութիւն կամ բացա-

\*) Կարելի է ընտրել նաև մէկ կամ երկու տարով նայած  
տեղական սովորութիւններին պէտք է ընթանալ նրանով, որն  
աւելի կը յարմարի տեղական ազգաբնակութիւն պահանջներին  
թրգմ.

կայութեան դէպքում—եթէ դա կտեի մի շաբաթից աւելի վարչութիւնն իրաւունք ունի բացակայող անդամի պարտականութիւններից մէկին: Եւ երբ անձնափոխանորդը փոխարինում է վարչութեան անդամին, օգտուում է այդ դէպքում վարչութեան անդամների բոլոր իրաւունքներով:

Ծանօթութիւն. Պաշտօնը յանձնելու մասին կատարուում են համապատասխան դիտողութիւններ արձանագրութեան մէջ:

11. Անձնափոխանորդներն ամբողջ ժամանակի ընթացքում փոխարինում են վարչութեան անդամներին:

ա. Վարչութեան անդամի մահւան դէպքում,

բ. Վարչութեան անդամի վերջնական մեկնելու դէպքում,

գ. Վարչութեան անդամի հրաժարուելու դէպքում:

Ծանօթութիւն. Տեղապահի ընարութիւնը կատարուում է վարչութիւնը՝ անձնափոխանորդների միջից:  
Վարչութեան ժաղովները.

12. Վարչութիւնը ունենում է շաբաթական առնւազը մի հերթական նիստ, որի համար յատուկ ծանուցագրեր չեն ուղարկուում անդամներին:

Ծանօթութիւն 1. Նիստերին պարտաւոր են ներկայ լինել վարչութեան բոլոր անդամները:

Ծանօթութիւն 2. Եթէ վարչութեան անդամը բացակառում է անընդհատ 4 հերթական նիստերից և նաև խօրօք չի յայտնում բացակայութեան պատճառը, վարչութիւնը կարող է հեռացւած համարել նրան, որի համար պիտի արւի որոշում և յայտնի հեռացւած անդամին:

13. Հերթական նիստերից գատ, վարչութիւնը կարող է գումարել և արտակարգ նիստեր նման նիստերը, ըստ պահանջման, հրաւիրում են նախագահը կամ փոխ-նախագահը—ըստ իրենց հայեցողութեան և կամ վարչութեան անդամներից մէկն ու մէկի յայտարարութեամբ:

14. Վարչութեան նիստերն օրինաւոր են, երբ ներկայ են նախագահը կամ փոխ-նախագահը և վարչութեան անդամների մեծամասնութիւնը:

15. Ընկերութեան անդամները կարող են մասնակցել նիստերին խորհրդակցական ձայնի իրաւունքով:

16. Վարչութեան նիստերի մասին յայտնուում է նմանապէս անձնափոխանորդներներին: Սրանք նիստերին ներկայ են

լինում խորհրդակցական ձայնի իրաւունքով:

Ժողովների լեռացի եւ առարկաները.

17. Վարչութեան ժողովներին նախագահում է նախագահը կամ փոխ-նախագահը:

18. Բոլոր հարցերը վճռում են ձայների մեծամասնութեամբ: Տարածայնութեան գէպօւմ հարցը թողնում է հետևեալ նիստին: Եթէ հարցի հրկրորդ քննութեան գէպօւմ դարձեալ ձայների մեծամասնութիւն չի ստացւում, այն ժամանակ խնդիրը կարող է ընդհանուր ժողովի քննութեան դրւել:

19. Վարչութեան հերթական նիստերի քննութեան առարկաներն են—

ա. Շրջանառութեան չափը,

բ. Մուտքը և իլքը,

գ. Տեղեկութիւն վերջին նիստից յիշոյ ստացւած ազրանքների մասին,

դ. Նոր ստացւած հաշիւները,

ե. Գնումների խնդիրը,

զ. Վաճառման գները և նրանց փոփոխութեան խնդիրը,

է. Անդամներ ընդունելը և անդամների թիւը շատացնելու խնդիրը,

ը. Քննել ծառայողների և ընկերութեան անդամների բոլորն ու յայտարարութիւնները.

թ. Ստուգել գրամարկղը (առնւազն ամիսը մի անգամ).

ժ. Գնորդների պարտքերի խնդիրը, եթէ ընկերութեան մէջ ընդունեած է ապառիկ վաճառքը,

ժա. Քննութիւն մայր տօմարի հաշիւների.

ժբ. Նախագահի և քարտուղարի զեկուցումները հաշւապահութեան կանոնաւորութեան մասին և նրանց վաւերացումն.

ժգ. Վարձել և արձակել ծառայողներին, սահմանել նրանց վարձատրութեան չափը և աշխատանքը ժամերը.

Ծանօթարիւն. Մեծ թւով ծառայողներ ունեցող սպառողական ընկերութիւնների ծառայողներին վարձելու արձակելու համար կազմում է յատուկ հրահանգ:

ժդ. Վճարումների բաշխումն ըստ հաշիւների,

ժե. Քննել և վճռել ննացած բոլոր ընթացիկ գործերը, որոնց համար անհրաժեշտ են վարչութեան որոշումները:

20. Վարչութեան արտակարգ ժողովներում քննուում և որոշում են ինչպէս անյետաձգելի գործերը, նոյնպէս և ընթացիկ գործերը:

21. Վարչութեան ժողովներում իւրաքանչիւր անդամը գե-

կուցանում է իրեն յանձնւած բամբի զրութեան մասին և ընդհանուրի քննութեան է գնում այսպիսի հարցեր, որոնք վերեն իր իրաւասութիւնից, ինչպէս և այսպիսի հարցեր, որոնք ընդհանուրի քննութեամբ կարող են լուծել:

22. Վարչութեան ժողովներն անպայման արձանադրում են և ստորագրում նիստերին մասնակցող անդամների կողմից: Արձանագրութիւնների համար պահում է յատուկ մատեան:

23. Արձանագրութեան մէջ մտնում են բոլոր ընդունւած որոշումները:

Ծանօթութիւն. Վարչութեան որոշմանը չհամաձայնողները կարող են այդ մասին իրենց անհամաձայնութիւնը տրամադրութեան մէջ մտցնել: Միայն այդպիսի զրաւոր լուսաբանութիւն եղած դէպրում նրանք ազատում են որոշման հետեանքների պատասխանատվութիւնից:

Ստորագրութիւններ.

24. Առաքելիք զրութիւնները ստորագրում են վարչութեան նախադահը և քարտուղարը:

Ծանօթութիւն. Վարտականութիւնները չըովանդակող զրութիւններ կարող է ստորագրել միմիտյն քարտուղարը:

25. Եպրանքային ուստի է ըները ստորագրում են նախադահը և խանութը կառավարող վարչութեան անդամը:

26. Դրամարկղի վրա քաշւած չեքերը և փող վճարելու գրութիւնները ստորագրում են նախադահը և գանձապահը:

27. Մուբհակները, վճարելի ստացականները (платежный яквитанци), հաւատարմաթղթերը, պայմանագրերը, ապահովագրական թղթերը, վարկային հիմնարկութիւններից ընկերութեան գումարները յետ ստունալու պահանջաթղթերը ստորագրում են վարչութեան Յ անդամները:

28. Հաշւետութիւնները, հաշիւնները, նախահաշիւնները և գեկուցումները ստորագրում են վարչութեան բոլոր անդամները:

29. Հասարակ և զրամական գրութիւնները ստանալու ծանուցագրերը ստորագրում է նախադահը կամ քարտուղարը:

30. Ընդունւած և զնահատւած ապրանքների հաշիւնները ստորագրում են խանութը կառավարող վարչութեան անդամները:

31. Ստացւած զրութիւնների վրա պիտի համառօտակի մակղեր համապատասխան վճիռները կամ զործողութիւնները:

Գործերն ընդունելը.

32. Պաշտօնի մէջ մտնելիս, նոր վարչութիւնը հնից պիտի ստանայ գործերը:

33. Ապրանքն ևս պիտի ստանայ, բայց միայն այն դէպքը ուղարկ, եթէ չկայ պատասխանառութ զործակատար:

34. Մատեանների ստացումը վաւերացնում է ստորագրութիւններով համապատասխան տեղերում, իսկ գրքերի մէջ չմըտացւած փաստաթղթերի համար կազմում է ցուցալազբութիւն:

35. Դրամարկղի և գրամական փաստագրերի համար ալէտք է կազմիլ արձանազբութիւն՝ նշանակելով կամնիիկ դրամի քառակը և անուն-անուն յիշելով դրամական փաստաթղթերը և նրանցից իւրաքանչիւրի արժէքը:

36. Գործերի ստացման համար կազմում է արձնազբութիւն, որը վաւերացնում է ինչպէս նախկին, այնպէս և նոր վարչութեան ստորագրութիւններով:

## 2 ՀՐԱՀԱՆԳ ՆԱԽԱԳԱՀԵՒ

Նախագահի բնդիմանուր պարտականութիւնները.

37. Նախագահը հանդիսանում է Ընկերութեան ներկայացնուցիչը այն բոլոր գէպքերում, երբ չի պահանջնում զրա համար յատուկ լիազօրութիւն:

38. Նախագահը պարտաւոր է հսկել՝

ա. Ընկերութեան բոլոր գործերի կանոնաւոր ընթացքին,

բ. Ընդհանուր ժողովների և վարչութեան որոշումների իրաւութեամբ,

գ. Ընկերութեան բոլոր գործերին իրենց կատարման ժամանակին,

դ. Ընկերութեան անդամների ցուցակի կանոնաւորութեանը,

ե. Բաժնիվճարների (փայ) կանոնաւոր վճարման,

զ. Ընկերութեան դրամների և գրամարկղի հաշւապահութեանը,

է. Ընկերութեան շէնքերի, ունեցւածքի պարանքների առանձին հովագմանը ըստ նրանց արժողութեան և տեսչութեան,

ը. Առեւրի համար հարկաւոր վկայականներն ու արտօնագրերը ժամանակին ձեռք բերելուն, ինչպէս և դեմսկի ու քաղաքային տուրքերը ժամանակին վճարելուն,

թ. Ընկերութեան վերաբերեալ տեղեկութիւններն ու հաշիւնները ժամանակին ելմտական տեսչութեան ներկայացնելուն,

ժ. Վարել յարաբերութիւններ բոլոր վարչական հիմնարկութիւնների ու անձնաւորութիւնների հետ,

ճ. Հոգալ ընդհանուր ժողովների մասին (գտնել շէնքեր, տեղեկացնել անդամներին, ժամանակին զեկուցումներ ներկայացնել և այլն).

ժը, Հոգալ, որ արձանագրութիւնները կանոնաւոր կերպով կազմւեն և նխտերից յետոյ անմիջապէս ստորագրւեն.

Ժգ. Կապ պահպանել սպառող. ընկերութիւնների միութիւնների և առնասաբակ կօպերատիւ կենտրոնների հետ\*).

Ժգ. Ժամանակին ծանօթացնել վարչութեանը՝ բոլոր խընդիրներին, առաջարկութիւններին, յայտարարութիւններին, ինչպէս և միութիւնից ստացւած գրաւոր ու տպագիր շրջարերականներին:

Ժե. Ժամանակին տալ պատասխան՝ սպառողական ընկերութիւնների միութեան բոլոր հարցումներին:

Նախագահի պարտականութիւնները վարչութեան ժողովներում.

39. Նախագահը նախագահում է վարչութեան ժողովներում:

40. Նախագահը իր հայեցողութեամբ նշանակում է վարչութեան արտակարգ ժողովները.

41. Նախագահը հետեւոմ է վարչութեան ժողովներում հաղորդւող տևեալների ստուգութեանը՝

ա. Ազգային պահպան շրջանասութեան մասին,

բ. Անդամների թւի մասին.

գ. Ընկերութեան պարտատէրերի հաշիւնների մասին,

դ. Ընկերութեան յետածգւած հաշիւնների և յետաձգման պատճառների մասին,

ե. Իւրաքանչիւր ամիս եղած առևտրական ծախքերի մասին:

Նախագահի պարտականութիւնները գործակարութեան ընթացքում.

42. Նախագահը ստորագրում է բոլոր թղթերը և այն բոլոր քաղաքացիները, որոնք ներկայացւում են զատական, պիտական, հասարակական հիմնարկութիւններին և պաշտօնատարանձանց:

43. Նախագահը—կամ քարտուղարը—ստանում է ընկերութեան անունով եղած բոլոր թղթակցութիւնները:

44. Նախագահը մակագրում է դրամական պահանջաթղթերի վրա:

Նախագահի առանձնայատուկ պարտ և կանութիւնները.

45. Նախագահը, քարտուղարի հետ միասին, պարտաւոր է հոգալ անդամների կօպերատիւ գիտակցութեան զարգացման մա-

\*.) Հայտատանում կապ պահպանել Հայտատանի կօպերատիւնների Միութեան հետ:

սին, որի համար նա ջանալու է՝  
ա. Բերել և տարածել անդամների ու աղդաբնակութեան մէջ  
կօօպերատիւ պարբերականներ գրքեր, ու թերթեր.  
բ. Կազմակերպել զրոյցներ ու գասախօսութիւններ.  
դ. Կիբառել ուրիշ համապատասխան միջոցներ:

### Յ. ՀՐԱՀԱՆԳ ԳԱՆՉԱՊԱՀԻՆ

Գանձապահի ընդհանուր պարտականութիւնները.

46. Գանձապահը վարում է ընկերութեան ամբողջ պար-  
մական գործունէութիւնները.

47. Գանձապահի պարտականուներն են՝  
ա. Ստանալ ընկերութեան զրամարկով մտնող բոլոր գու-  
մարները.

բ. Տալ ստացական այդ գումարների ստացման համար.  
գ. Վճարել համաձայն վաւերացւած հաշիւնների, ստաց-  
ւած ապրանքների արժէքը և ընկերութեան համար կատար-  
ւած աշխատանքները.

դ. Վճարել ընկերութեան անդամներին բաժնեգները և  
վաստակը—համաձայն վարչութեան որոշման և վաւերացրւած  
հաշիւնների.

ե. Տալ նւէրներ վարչութեան կազմին և ընկերութեան-  
ծառայողներին՝ համաձայն պահանջաթերթիւն.

զ. Պահ տալ ... բուրլուց աւելի կանխիկ գումարները և զած  
այն հիմնարկութիւններին, որոնք վարչութեան ժողովի կողմից  
ճանաչւած են նպատակայարմար.

է. Յարաբերութիւն պահպանել Մոսկվայի ժողովրդական-  
քանիկ և վարկային կօօպերատիւ հիմնարկութիւնների հետ\*).

ը. Հոգալ ընկերութեան զրամական միջոցները աւելաց-  
նելու.

թ. Հսկել անդամներից վերցւող մանր փոխառութիւններին,  
և թէ վերջինս ընդունւած է ընկերութեան կողմից.

ժ. Պահել չայրւող և ապահով տեղում՝ քարտուղարից  
ստացած ընկերութեան կանխիկ գումարները, ինչպէս նաև բոլոր  
պայմանագրերը, ապահովագրական փոխգրերը (պօլիսներ) և  
կարեռ փաստաթղթերը.

\*.) Հայաստանում շուտով հիմնելու է կօօպերատիւ բանկը  
որին և պէտք է դիմել այսպիսի պարագաներին:  
Թարգմ.

ժամ. Որոշւած ժամանակին ստանալ խանութիւն կառավարչից կամ գանձ սպահից խանութիւն եղած կանխիկ զրամները.

Ժբ. Հսկել ժամանակին ապահովագրելու ընկերութեան տուկուարեր թղթերը և նրանց տոկոսներն ստանալուն.

Ժգ. Հստել զրամական վաստագրերի զրօշմատութիւն (գերեզմանը ստորագրել և ստորագրել ելքի բոլոր օրդիքները).

48. Գանձապահը վճարում է բոլոր հայիւները, եթէ նրանք մակագրւած են վարչութեան անդամի, խանութիւն կառավարչի և հարկաւոր գէպը ունակ վարչութեան նախապահի կողմից:

49. Գանձապահը վարում է վճարումների և մուրհակների զրքերը (книга платежей и вексельная книга).

50. Գանձապահը պէտք է նախատեսնի խոշոր ծախքերը և ըստ այնու ժամանակին հոգայ կանխիկ դրամ՝ հաւաքելու կարեոր գէպքերում նա զեկուցում է տալիս վարչութեանը՝ կանխիկ գումարը շատացնելու համար միջոցներ ձեռք առնելու մասին:

51. Գանձապահը վարչութեան խրաքանչիւր ժողովում զեկուցանում է զրամարկում և վարկային հաստատութիւններում ունեցած գումարների, ինչպէս և վարչութեան ունեցած արժեթղթերի մասին:

Գանձապահի պարտականութիւնները կանխադրամ տալու միջոցին.

52. Գանձապահը ապրանքներ զնելու համար առձեռն գումար տալիս է վարչութեան այն անդամին, որը կառավարում է խանութը, ինչպէս նաև այն անդամներին, որոնց յանձնարարւած է վարչութեան որոշումով գնումներ կատարել:

Ծանօթութիւն. Առձեռն գումարը տրւում է ամեն անդամ առանձին ստացականով:

53. Գանձապահը պարտաւոր է առձեռն գումարի համար հաշիւ պահանջել երեք օրւայ բնթացքում տալու օրից հայւած: Ծանօթութիւն. Գնումներ կատարելու նպատակով ուղարկեած անձնաւորութիւններից գանձապահը պարտաւոր է առձեռն գումարի համար հաշիւ պահանջել երկու օրւայ բնթացքում, հաշելով նրանց վերադարձի օրից:

54. Գանձապահը պարտաւոր է վարչութեան ամենամօտակայ ժողովում զեկուցանել առձեռն գումարների հաշւետութեան գործում տեղի ունեցած խրաքանչիւր ուշացման մասին:

55. Գանձապահը վարում է զրամարկում ամար՝ եթէ կայ առանձին զրամարկապահ (кассиръ), այդ գէպքում գանձապահը

ամեն օր ստուգում է նբա զրամարկղային տեղեկադիրը և սրահատածական կտրոնը (отрыбной толонъ) ու փաստաթղթերին նետ միասին, յանձնում է հաշւապահին—եթէ կայ—և կամ վարչութեան քարտուղարն մատեանի մէջ մացնելու համար:

Գանձապահի պարտաւորութիւնները դրամարկդ ստուգելու միջոցին.

56. Գանձապահը լուս կարելույն յաճախի և յամենացն դէպսոչ պակաս, քան շարաթը երկու անգամ, համեմատում է զրամարկղի կանխիկ գումարը զրամարկղի տօմարի կամ տեղեկադրի ցուցած մնացորդի հետ և անհամապատասխան երկնուրու դէպսում, անմիջապէս աշխատում է գտնել տարբերութիւնը, այդ մասսին գեկացանելով վարչութեանը՝ ամենաառաջին նիստում:

57. Դրամարկդում գտնւած կանխիկ զրամի աւելորդը—մատեանում ցոյց տրւածի համեմատութեամբ աւելորդը—զրւում է անմիջապէս մուտք «Զանապան աննձնաւորութիւններն և հիմնարկութիւնները» սիւնեակում, իսկ պակասորդը զրւում է իհաշիւ գանձապահի, որը պիտի լրացնի այդ ամենակարճ ժամանակում, ըստ վարչութեան ցուցմունքի:

58. Գանձապահը պարտաւոր է ստուգել խանութի կանխիկ գումարները առնեալը շարաթը մի անգամ, համեմատելով խանութի հաշիւների և զրամական տեղեկապերի հետ:

59. Գանձապահը պարտաւոր է պահանջած դէպսում ներկայացնել զրամարկղի կանխիկ գումարի հաշիւները, ստուգման համար, կամ վարչութեան անգամներից երկուսին և կամ վերաստուգիչ յանձնամութիւնի այն անգամներին, որոնք լիազօրութիւննեն զրա համար:

#### 4. ՀԲՈՀԱՆԴ ՔԱՐՏՇԻՂԱՐՄԻՒՆ

Քարտուղարի ընդհանուր պարտականութիւնները.

60. Քարտուղարի պարտականութիւններն են՝

ա. Հակել՝ որ ընկերութեան հաշւապահութիւնն ու գործակարութիւնը տարւեն կանոնաւոր կերպով.

բ. Պատասխանել հարցումներին, նամակներին, գրութիւններին և այլն.

գ. Վարել Վարչութեան արձանագրութիւնների մատեանը.

դ. Կազմել տարեկան հաշվետութիւնը և կամ հակել, որ հաշւապահը իր ժամանակին և կանոնաւոր կերպով կազմի այն.

ե. Ռւղարկել ժամանակին ընկերութեան հաշւետեռթիւնները սպառողական ընկերութիւնների միութիւններին, եւեւմտից տեսչութեան և այլ հիմնարկութիւններին.

զ. Վարել ընկերութեան անդամների ցուցակը.

է. Կազմել ընկերութեան գործունէութեան տեղեկագիրը նախագահի հետ միասին.

ը. Պահել ընկերութեան կնիքը.

թ. Պահել ընկերութեան ստացած բոլոր թղթերը.

ժ. Պահել առաքելիք զրութիւնների պատճէնների և ստացւելիք զրութիւնների մատեանները.

ժա. Ստորագրել այն թղթերը, նամակներն ու փաստագրերը, որոնք ընկերութեան վրա պարտաւորութիւններ չեն դնում.

ժը. Բանալ ընկերութեան անունով ստացւած բոլոր նամակներն ու թղթերը և յանձնել ըստ պատկանելոյն:

Քարտուղարի յատուկ պարտականութիւնները.

61. Քարտուղարը պարտաւոր է, նախագահի հետ միասին, մշտական և մօտիկ յարաբերութիւններ պահել միութեան, ինչպէս նաև հարեւան կօպերատիւ հիմնարկութիւնների հետ, և հոգալ անդամների մէջ կօպերատիւ գիտելիքների տարածման մասին:

62. Քարտուղարը լրացնում է համապատասխան տեղեկութիւններով և ժամանակին ուղարկում ըստ պատկանելոյն ընկերութեան ստացած բոլոր վիճակագրական թերթերն ու հարցացուցակները, ինչպէս նաև վարում է իր ընկերութեան վիճակագրութիւնը այն ձևով, ինչ ձևով որ որոշել է վարչութիւնը:

Քարտուղար—նաւեապահի պարտականութիւնները.

63. Եթէ ընկերութիւնը չունի առանձին հաշւապահ, այդդէպօւմ քարտուղարի վրա զբւում են հետեւալ պարտականութիւնները՝

ա. Ընդունել ամեն օր (ամեն շաբաթ, եթէ հաշւապահութիւնը պարզ ձևով է տարւում) խանութը կառավարող վարչութեան անդամից խանութի հաշիւներն ու տեղեկագրերը համապատասխան փաստաթղթերի հետ միասին, ինչպէս նաև գանձապահից՝ զրամարկային տեղեկագրերը, նոյնպէս փաստաթղթերի հետ միասին.

բ. Վարել կասսա—մեմորիալ (հաշւապահական) կոչւած մատեանը և կազմել ամսական ստուգողական հաշւեկշիռ վարչութեանը

թեանը զեկուցանելու համար։  
գ. Վարել անդամների «Անձնական հաշիւների» մատեանը;  
դ. Վարել «Զանազան հաշիւների» և մատակարարողների  
(поставщикъ) հետ ունեցած հաշիւների մատեանը.  
ե. Կազմել տարեկան հաշետուութիւնը.  
դ. Պահել կասա-մեմօրիալում տրամադրուած կարդով բու-  
լոր արդարացուցիչ փաստաթղթերը։

### 5. ՀՐԱՀԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՌԱՎԱՐՈՂ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍՆԴԱՄԻՆ

64. Խանութի կառավարչութիւնը իր վրա է վերցնում վարչութեան անդամներից մէկը (կամ նախագահը) մենակ և կամ մէկ կամ աւելի օգնականներով, վարչութեան անդամներից։  
65. Եթէ խանութի կառավարչութիւնը ստանձնում է վարչութեան մի անդամը օգնականների հետ միասին, այդ գէպքում պարտականութիւնների ինդիբը նրանց մէջ սահմանում է վարչութեան կողմից հաստատւած յատուկ լրացուցիչ հրահանգով։

Խանութի ընդհանուր կառավարչութեանը վերաբերող  
պարտականութիւններ։

66. Խանութի ընդհանուր կառավարչութեան գործում վարչութեան անդամի վրա գրում են հետեւալ պարտականութիւններն ու լրաւունքները՝

ա. Առաջարկել վարչութեանը, ընդունելու և հեռացնելու համար, խանութի բոլոր ծառայողներին, բացի աւագ գործադարձարից, հաշւապահից և դրամարկղապահից և կազմել նրանց հետ կնքելիք պայմանագրերի նախագծերը։

բ. Արտակարգ գէպքերում, նախագահի համաձայնութեամբ, հեռացնել իրենց պարտականութիւնների կատարումից, մինչեւ վարչութեան ամենամօտաւակայ նիստի որոշումը, խանութի բոլոր կարգի ծառայողներին, բացի աւագ գործակատարից և գրամարկղապահից։

գ. Հսկել՝ որ ընկերութեան խանութի բոլոր ծառայողները կատարեն ըստ պայմանագրի և վարչութեան որոշումների իրենց վրա դրւած պարտականութիւններն և համապատասխան ցուցմունքներ տալ նրանց։

դ. Հետեւել՝ որ կատարեն օրէնքի և իշխանութեան այն բոլոր օրինաւոր պահանջները, որոնք վերաբերում են ընկերութեան խանութին և առեւորին։

ե. Քննել և իր եղբակացութեան հետ միասին վարչութեան

Ժողովին ներկայացնել այն բոլոր բողոքներն ու պահանջները, որոնք վերաբերում են խանութին, ապրանքներին ու խանութի ծառայողներին և արւած են ընկերութեան անդամների, մասնաւոր գնորդների, ծառայողների և վարչութեան ու վերտառութիչ յանձնաժողովի անդամների կողմից.

զ. Հետեւել՝ որ աշխատանքները կանոնաւոր կերպով բաժանեն ծառայողների մէջ և որանցից որ և է մէկը չափազանց ծանրաբեռնած չինի.

է. Հոգալ՝ որ տօն օրերի և մեծ տառատուր եղած օրերի համար ժամանակին աւելացրի ծառայողների թիւը, խնդրելով նախօրօք վարչութեան թոյլաւութիւնը.

ը. Հոգալ խանութի շնորհի ու զոյքերի կանոնաւորութեան, ինչպէս նաև մասն վերանորոգութեան ու զոյքերի լրացման մասին—մինչև .... բուրլու սահմաններում:

թ. Աւելի խոշոր ծախքերի նախահաշիւներն ու շինուածեան ընդարձակման վերաբերեալ նկատառութիւնները ներկայացնել վարչութեան ժողովի վաւերայման:

Պարտականութիւններ ապրանքներ զնելու միջոցին.

67. Ապրանքներ գնելիս նրա վրա դրւում են հետեւեալ պարտականութիւնները՝

ա. Վաւերացնել՝ աւագ զործակատարի կազմած ընթացիկ պահանջացուցակները ապրանքի վերաբերմամբ և նրա հետ միասին կազմել այդ պահանջացուցակները.

բ. Գնել՝ անձնական հայեցողութեամբ, ըստ այդ պահանջացուցակների, վարչութիւնից ճանաչւած մատակարարողներից ապրանքներ, իւրաքանչյւը անդամ ոչ աւելի քան ... բուրլու, իսկ պատահական մատակարարողներից՝ ոչ աւելի քան ... բուրլու, Ծանօթաբիւն. Կանխիկ գրամով գնումները կատարեւմ են գննածագահի համաձայնութեամբ:

գ. Վարչութեան վաւերայմանը ներկայացնել մնացած բուրլու ապրանքային պահանջացուցակները.

դ. Հետեւել՝ որ լրիւ լինեն ապրանքի տեսակները.

ե. Որսնել՝ ապրանքներ ձևոք բերելու համար նպաստառը ապրիւթներ, նախնական յարաբերութիւններ վարել այդ ուղղութեամբ և իր եզրակացութիւնները ներկայացնել վարչութեան վաւերացման.

զ. Վարչութեան ներկայացնել իր գիտողութիւնները ապրանքի տեսակների ընդարձակման վերաբերմամբ.

է. Իմանուլ այն պայմաններն ու գները, որոնցով կատա-

ըում են հարևան սպառողական ընկերութիւնները իրենց գնումները.

ը. Հարկաւոր դէպքերում տալ բոլոր սպրանքա-առևտրական տեղեկութիւնները միութիւն և միւս սպառողական ընկերութիւնների ներկայացուցիչներին.

թ. Մասնաւոր առևտրականներից և մասնաւոր ոչ-կօպերատիւ մատակարարներից խիստ գաղտնի պահել ընկերութիւնն պայմանները, ինչպէս նաև միութիւն և կօպերատիւ հիմնարկութիւնների կողմից նրան արած տուշարկութիւնները.

ժ. Գանաճացուցակները կազմելիս եւ ապրանեների գնահատումները կատարելիս, անհրաժեշտ և ուշադրութիւն զարձնել, որ պատվիրած ապրանեները համապատասխանի անդամների եւ գնորդների պահանջին: Եթէ չպետք է տարւել առանձին գնորդների բացառիկ գանաճները գոնացնելու ցանկութեամբ. չինտապնդել անպայման աժանուրեանք՝ ի վես ապրանեի յատկութեան. չխարւել սակաւ յայտնի հիմնարկութիւնների առաջարկած վարկերից ու արտօնութիւններից. շատ զգոյն վերաբերել առեւտրական զարակալների առաջարկութիւններին եւ ըջահայեցութեամբ լնգարձակել ապրանեների տեսակները ուսուկ զի իզուր տեղը ապրանեները պառկած չմնան եւ բնկեռութեան, ըջահանուրեան միջոցների աւելորդ լուրում ջիխի:

ժա. Երբ ընկերութիւնը նոր է բացւում կամ նոր ապրանքներ են գնուում, խանութը կառավարող վարչութեան անդամը պէտք է ուշադրութեամբ հիմնի, որ չլինի թէ աւելորդ ապրանքներ գնւեն, թէկուզ շատ գնորդների ստիպւած կլինեն միհրժել:

Պարտականութիւններ ապրանեներ սահմանիս եւ գնահատելիս.

68. Ապրանքներ ընդունելիս և գնահատելիս, նրա վրա դրւում են հետևեալ պարտականութիւնները՝

ա. Ներկայ գտնւել, երբ խանութի գործակատարն ընդունում է ապրանքները և անպայման մամնակցել այն ապրանքների ընդունման գործողութեանը, որոնք նոր տեսակի ապրանքներ են և կամ ձեռք են բերւում նոր մատակարարողներից.

բ. Վաւերացնել այն ապրանքների վաճառքի գինը, որոնց վաճառքի գինը որոշւած է առաջուց.

գ. Նշանակել վաճառքի գինը նոր ապրանքների համար, համաձայն վարչութեան կողմից սահմանւած կանոնների.

դ. Իր ստորագրութեամբը ճշտել հաշիւները ի վաւերացումն այն բանի, որ ապրանքն ընդունւած է գործակատարի կողմից, գնահատւած է ճիշտ կերպով և որ մատակարարողի ներկայաց-

բած առքի զները համապատասխան են պայմանաւորւած գներին.

ե. Հետեւ, որ խանութում աչքի լնկնող տեղում, միշտ դունի ապրանքների ցուցակը կանոնաւոր զներով, ինչպէս նաև ապրանքների վրա նշանակւած լինին վաճառքի և պայմանական գները՝ իրենց համար.

գ. Վերագնահատել ապրանքները, երբ այդ կտահանջեն ընդհանուր շուկայի զների բարձրացումը կամ ցածրացումը և կամ ապրանքի փշացած լինելու հանգամանքը.

է. Վարչութեան վաւերացմանը ներկայացնել ապրանքների գների իջեցումը, երբ այդ հարկաւոր կլինի խանութում պառկած ապրանքները լիկվիդացիայի ենթարկելու համար և որոնց գումարը աւելի չէ . . . բուրլուց:

ը. Ապրանքները պատասխանաւոր գործակատարին յանձնելիս, որոշել նրա, պատասխանաւոր գործակատարի, համաձայնութեամբ—թէ այս կամ այն ապրանքից որքան կարող է պահանջանալու, թափիելու և հօսելու պատճառով:

թ. Հետեւ շուկայի զների փոփոխութիւններին և ըստ այսմ, անհրաժեշտ դէսպերում, համաձայնեցնել և ընկերութեան խանութի զները:

Պարտականութիւններ ապրանքերը պահպանելիս եւ վաճառելիս.

69. Ապրանքները սղանպանելիս և վաճառելիս, խանութի կառավարչի վրա ընկնում են հետեւեալ պարտականութիւնները՝

ա. Հետեւ, որ ապրանքները պահեն կանոնաւոր ձեռվ և տեղաւորւեն ըստ իրենց յատկութիւնների—փշացումից դեռձ պահելու համար.

բ. Հետեւ, որ դնողներին արւեն համապատասխան ապրանքներ և որ գիսաւորն է՝ ծանօթացնել նրանց արդիւնաբերական կօօպերատիւնների հետ.

գ. Հոգալ ապրանքները տեղաւորելու այնպէս, որ գնորդներին բաց թողնեն առանց ուշացնելու և ըստ կարելոյն քիչ ոյժ վատնելու.

դ. Հրահանգել նախօրօք պատրաստելու և կշռած ունենալու աւելի ընթացիկ ապրանքները.

ե. Նշանակել զներն ու զեղջերը կօօպերատիւ և հասարակական հիմնարկութիւններին մեծաքանակ ապրանքներ բաց թողնելիս.

զ. Ժամանակին միջոցներ ձեռք առնել պառկած և հնացած ապրանքները լիկվիդացիայի ենթարկելու համար.

է. Տեղեկացնել անդամներին ու գնորդներին՝ նոր ստացւած ապրանքների մասին յայտարարութիւններով և այլ միջոցներով:

Պարտականութիւններ խանութի հաշւապահութեան եւ  
գործավարութեան վերաբերմամբ.

70. Խանութի հաշւապահութեան և գործավարութեան վե-  
րաբերեալ խնդիրներում՝

ա. Ամեն օր ստուգել ապրանքային տեղեկագիրը և նրան  
վերաբերեալ փաստագրերը, ստորագրութեամբ վաւերացնել և  
հատւածական կտրոնները, փաստագրերի հետ միասին, յանձնել  
հաշւապահութիւնը վարող պաշտօնեային.

բ. Վաւերացնել և կատարել ընթացիկ մանր ծախքերը  
մինչև ... ըուբլու սահմաններում.


գ. Ստուգել և վաւերացնել խանութի և ընկերութեան ձեռք  
բերած ապրանքների համար եղած ծախքերը.

դ. Պահել խանութի ամսական հաշվետութիւնը և վար-  
չութեան իւրաքանչիւր հերթական նիստում ներկայացնել ի տե-  
ղեկութիւն:

ե. Պահել ապրանք մատակարարողների, ինչպէս նաև այն  
աղբուրների ցուցակը, որտեղից ձեռք են բերում ապրանքներ:

71. Խանութի հսկիչ վարչութեան անդամը պարտաւոր է  
ամեն օր, որոշեալ ժամերին, լինել խանութում՝ ընթացիկ գործե-  
րը վարելու համար, բացի գրանից, այդ ժամերից դուրս, զանա-  
զան ժամանակներում, նա պէտք է ըստ կարելւոյն յաճախակի  
այցելի խանութը՝ գործի կանոնաւորութեանը հսկելու համար:

72. Ընկերութեան գործերով և կամ այլ պատճառներով  
բացակայելու գէպքում խանութի հսկիչ վարչութեան անդամը իր  
պարտականութիւնների կատարումը յանձնում է վարչութեան  
անդամներից մի ուրիշին—փոխադարձ համաձայնութեամբ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		էջ
1.	Ընդհանուր մաս	3
2.	Հրահանգ նախագահին	9
3.	» գանձապահին	11
4.	» քարտուղարին	13
5.	» խանութը կառավարող վարչութեան անդամին	15

— 576 577 —